ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-7-5-Ա

ք. Երևան 01.10.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում քննարկեց 2025 թվականի փետրվարի 13-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «Honor Device Co., Ltd.» ընկերության (Suite 3401, Unit A, Building 6, Shum Yip Sky Park, No. 8089, Hongli West Road, Xiangmihu Street, Futian District, Shenzhen 518040 Guangdong, CN) «C» (IR1739833) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան ՀՀ-ում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «PCS» (PCS Software, Inc. 2103 CityWest Blvd., Bldg 4, Suite 700 Houston TX 77042 (US) IR 1633464) համակցված ապրանքային նշանի առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 115-րդ, 127-րդ կետի 1-ին, 9-րդ ենթակետերի, 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել համակցված ապրանքային նշանները: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանները նման են իրենց պատկերային մասերով, որոնք ընդհանուր առմամբ զուգորդվում են միմյանց հետ և լինելով հիմնական ընկալման տարրեր միջին սպառողի մոտ կարող են առաջացնել նույն պատկերի ընկալման զգացողություն: Ինչ վերաբերում է համեմատվող ապրանքային նշանների առանձին տարբերությունների առկայությանը,

ապա դրանք էական նշանակություն չեն կարող ունենալ ավելի վաղ ապրանքային նշանը տարբերակելու հայտարկված ապրանքային նշանից:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ, քանի որ հայտատուն կրճատել է ապրանքների ցանկը, որոնց համար խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը և այն նույնական չէ հակադրված ապրանքային նշանի ապրանքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը նիստին ներկա չէր:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված «Honor Device Co., Ltd.» ընկերության «C» (IR1739833) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել հետևյալ ապրանքների համար՝ «ներբեռնելի համակարգչային ծրագրային հավելվածներ, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. համակարգչային ծրագրեր համակարգիչներին կամ համակարգչային ցանցերին հեռահար միացման համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. համակարգչային ծրագրային ապահովում համակարգչի մուտքի վերահսկման համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. ծրագրային հավելվածներ բջջային հեռախոսների համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. զրուցող ռոբոտների ծրագրային ապահովում

խոսակցությունների մոդելավորման համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. նավագնացական համակարգիչներ մեքենաների համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. ներբեռնվող ճանապարհային քարտեզներ, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. էլեկտրոնային հրապարակումներ, ներբեռնվող, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. ինտերակտիվ սենսորային տերմինալներ, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. խելացի ժամացույցներ. խելացի ակնոցներ. նոութբուք համակարգիչներ. ավտոմեքենաների կայանման վճարովի ժամանակի հաշվիչներ, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. հոլոգրամներ. դեմքի նույնականացման սարք. ընդունող-փոխանցող սարքեր երկար տարածությունների վրա փոխանցելու համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. դիրքորոշման համաշխարհային համակարգի ապարատներ (GPS), բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. նավագնացական սարքեր տրանսպորտային միջոցների համար (նավակողային համակարգիչներ), բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. սմարթֆոններ. ականջակալ. տեսագրող սարքեր մարդատար մեքենաների համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. մեքենայի հեռուստացույցներ. աուդիոսարքեր մեքենաների համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. վիդեո պրոյեկտորներ. տեսախցիկներ [լուսանկարչություն]. տրանսպորտային միջոցների արագությունը վերահսկող սարքեր, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. ռադար-դետեկտորներ, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. չիպեր (ինտեգրալ սխեմաներ), բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. սենսորներ, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. տեսաէկրաններ, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. էլեկտրոնային բանալի-բրելոկներ

հեռակառավարման համար, բացառությամբ փոխադրումների, բեռնափոխադրումների և տրանսպորտային միջոցների կառավարման համար. գողության կանխարգելման կայանքներ, էլեկտրական. վերալիցքավորվող մարտկոցներ»:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ